AMX Armenia Securities Exchange

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

29 օգոստոսի 2023 թվականի N ՑՊ-026-08/23

ք. Երևան

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2023 թվականի օգոստոսի 09-ին «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերությանը (այսուհետև՝ Օպերատոր) ներկայացված «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 8,550,900 եվրո ընդհանուր անվանական ծավալով, 100 եվրո անվանական արժեքով, 48 ամիս շրջանառության ժամկետով, 4.5% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 85,509 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ հայտը և 2023թ-ի օգոստոսի 23-ին ներկայացված հայտի լրացումը, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից հաստատված 2023 թվականի օգոստոսի 23-ի եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 12-րդ գլխով սահմանված պահանջներին, և ղեկավարվելով Օպերատորի Կանոնների 15-րդ գլխի 70 կետի 1-ին ենթակետով, և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.52) կետի ե) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 8,550,900 եվրո ընդհանուր անվանական ծավալով, 100 եվրո անվանական արժեքով, 48 ամիս շրջանառության ժամկետով, 4.5% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 85,509 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMSWISB2JER7 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, շնորհել SWISBJ հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:

2. Հայտերի (առաջարկների) ներկայացումը և գործարքների վերջնահաշվարկը կատարել Եվրո արժույթով:

3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի սեպտեմբերի 1-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**